ԿԻԼԻԿԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ.
ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

DOI: 10.52174/2579-2989_2023.3-117

Սկիզբը՝ նախորդ համարներում.
«Ամբերդ» տեղեկագիր 2023/1 (20)
(https://asue.am/upload/files/amberd/2023-year-1/12.pdf)
«Ամբերդ» տեղեկագիր 2023/2 (21)
(https://asue.am/upload/files/amberd/ 2023-year-2/15.pdf)

Առանց ինքնահաղթահարման անկարելի է որևէ այլ հաղթահարում:

Հայկ Ասատրյան

Հիմնաբառեր. *Կիլիկիայի թագավորություն, խաչակիրներ, Խաչակրաց արշավանքներ, ներազդող խմբեր, արտաքին միջավայր*

Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2023 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է:

Շուրջ երեք տասնյակ գիտական, վերլուծական հոդվածների և 3 մենագրության հեղինակ է:

https://orcid.org/0000-0001-9014-5892

Իշխանապետությունից անցումը թագավորության չէր կարող տեղի ունենալ միայն ներքին միջավայրի վրա ներազդող գործոնների ու բաղադրիչ սուբյեկտների արդյունավետ գործունեության և համագործակցության արդյունքում: Հետևաբար՝ դրանք անհրաժեշտ, սակայն դեռևս բավարար պայմաններ չէին: Գործընթացի հաջողության հիմնական բանաձևը ներքին ու արտաքին միջավայրերի սուբյեկտների շահերի ու դրանց համընկնումների հնարավոր համադրումների՝ որպես նպատակին հասնելու գործիքակազմի ժամանակին ու արդյունավետ օգտագործումն էր: Այդ առումով, հոդվածաշարի այս հատվածում կատարվել է արտաքին միջավայրի ազդեցիկ միավորների դասակարգում՝ ըստ խմբերի՝ վերջիններիս շահերի գերակայությունների ու ժամանակագրության գործոնների ներազդման համատեքստում: Ուսումնասիրվել է տվյալ ժամանակահատվածում տարածաշրջանի հիմնական արտաքին «խաղացողների» հնարավոր ազդեցության չափը, ինչպես նաև վերլուծվել Կիլիկիայի իշխանապետությունից դեպի թագավորություն անցումային գործընթացում նրանց գերակա շահերի հակազդեցության ու համընկնումների բարդ հանգույցը:

Բ. Արտաքին միջավայր. ներազդող խմբի խոշոր «խաղացողները»

Իշխանապետության ծնունդն ու կայացումը չէին կարող հարթ ու սահուն լինել այնպիսի մի միջավայրում, որտեղ արտաքին ներազդող խմբի միավորների մեծամասնության գերակա շահերն ուղղակի հակազդեցության մեջ էին Ռուբինյանների պետականաստեղծ ծրագրերի ու դրանից բխող նպատակային քայլերի հետ:

Սակայն, Ռուբինյանների ներկայացուցիչ ների կողմից վարվող ազգահավաք քաղաքականությունը միտված էր նրան, որ անգամ սպառնացող վտանգների մեջ նրանք փորձում էին գտնել պետականակերտման ծրագրի իրականացմանը նպաստող թաքնված հնարավորություններ, իսկ շահերի ընդհանրականության առումով՝ որոշակի տրամաբանական ու գործընթացային համընկնումներ, որոնք ի զորու էին «աշխատելու»՝ ի նպաստ նոր պետականության ձևավորման գերագույն նպատակի իրագործման:

Միաժամանակ, յուրաքանչյուր նպատակային նախագիծ կամ ծրագիր, բացի արտաքին սուբյեկտների դերի, մասնակցության աստիճանի և ներազդեցության չափի հաշվարկից, ունի նաև մեկ այլ կարևոր բաղադրիչ, որը վերաբերում է պատեհ պահի գործոնի ճշգրիտ կիրառելիությանը, ասել է թե՝ նախագծի իրականացման «եփման ու մատուցման» փուլերի իրագործելիության պահի ստույգ գնահատմանն ու ընտրությանը: Հենց այս դեպքում է, որ անգամ ուժեղ հակազդման բաղադրիչների առկայության պարագայում հնարավոր է դառնում գերակա նպատակին հասնելու ուղղությամբ որոշիչ և թիրախային քայլերի իրականացումը:

Կիլիկիայի պարագայում իշխանապետության ծնունդը, ներքին միջավայրի բաղադրիչների առումով, կարծես թե, ամբողջական ձևավորված և ընդգծված վեկտոր ունի: Առկա է մշակված ծրագիր, անհատի կամք, նպատակային քայլերի հաջորդականության տրամաբանություն, որոնք այդ պահին գործնականում համընկնում են Հայ առաքելական եկեղեցու (ՀԱԵ) քաղաքականությանը, թեև եկեղեցական վերնախավի համար տվյալ դեպքում ավելի գերակա էր կառույցի կենսունակության պահպանման, քան հայկական այլընտրանքային պետության ստեղծման ազգապահպան գաղափարը:

Արտաքին միջավայրում, սակայն, խընդիրը բոլորովին այլ էր:

Գործընթացի վրա արտաքին ներազդող խմբի սուբյեկտների քանակը, ամենամեղմ հաշվարկով, մեկ տասնյակ էր: Դրան ավելացնենք այն հանգամանքը, որ այս խմբի ներկայացուցիչների գերակա շահերի ներկապնակը շատ բազմերանգ էր, որտեղ ընդգծված կերպով երևում էին յուրաքանչյուրի տարածաշրջանային նկրտումները, սկզբունքների առաջնայնությունները, անթաքույց ու թաքնված հավակնությունները և դրանք կյանքի կոչելու հնարավորությունները:

Գծապատկեր 1-ում պետական ու կառուցվածքային այն միավորներն են, որոնք գոյություն ունեին տարածաշրջանում Կիլիկիայի իշխանապետության/թագավորության ծննդյան, գոյության և անկման ժամանակաշրջաններում:

Ըստ ժամանակագրության՝ վերը ներկայացված միավորներից առնվազն 6-ի՝ Իկոնիայի սուլթանության, Սելջուկյան սուլթանության, Հալեպի սուլթանության, Եդեսիայի կայսրության, Երուսաղեմի թագավորության, Անտիոքի դքսության ստեղծման ու կենսագործունեության ժամանակահատվածները, տարեթվերի փոքր շեղումներով, հիմնականում համընկնում են իշխանապետության ձևավորման ժամանակաշրջանի հետ:

Հետևաբար՝ ակներև է, որ վերոնշյալ միավորներում նույնպես տեղի էին ունենում պետականաստեղծման կամ «վերբեռնման» ու դրանից բխող անհրաժեշտ ինստիտուտների ձևավորման նույնանման գործընթացներ, որոնք հնարավորություն էին ընձեռում իշխանապետության նախագծի մշակողներին ու իրականացնողներին տարածաշրջանային «խաղասեղանին» մոտենալու «հավասարը հավասարի» սկզբունքով: Շահերի համընկնումների հենց այս դիտանկյունից է, որ իրավիճակի սթափ ընկալումը և սեփական շահերի գերակայության սկզբունքի պահպանումը, պատմական առումով, թույլ տվեցին Ռուբինյաններին արտաքին առերևույթ վտանգները դարձնել հնարավորություններ:

Ուստի պետք է արձանագրել, որ իշխանապետությունից անցումը թագավորության, արտաքին միջավայրի տվյալ հատվածի ներազդեցության համատեքստում, կարելի է համարել դասական օրինակելի պատմություն՝ հատկապես ոչ բարյացակամ արտաքին «խաղացողների»



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Կիլիկիայի իշխանապետության/թագավորության միջավայրի հիմնական «խաղացողները»[1]

այսպիսի «փնջի» պարագայում:

Արտաքին միջավայրի, թերևս, միակ պետական միավորը, որն ուներ իր պատմական հիշողության «հուշարար գրքույկը»՝ նախկին հայոց թագավորությունների հետ հարաբերությունների կառուցման դրական ու բացասական փորձերի «բույլով», Բյուզանդական կայսրությունն էր[2]: Սակայն, բացի իր ներքին միջավայրի հոգևորական դասի կողմից առանձին վարվող քաղաքականության բաղադրիչից, Բյուզանդական կայսրությունն այլևս չէր կարող համարվել արտաքին միջավայրի ներազդող որոշիչ գործոն, քանի որ օբյեկտիվորեն այլևս չէր ապրում իր վերելքի ժամանակաշրջանը, իսկ 1071 թվականի «Մանազկերտի պարտությունը»[3], ըստ էության, ուղղափառ ներառականությամբ կայսրության մարման գործընթացի սկիզբն էր: Այդուհանդերձ, անկախ վերոնշյալ հանգամանքից, արդեն մահացու վիրավոր կայսրությունն ու, հատկապես, դեռևս կենսունակ ուղղափառ եկեղեցու ինստիտուտն ունակ էին խառնելու Կիլիկիայի պետականակերտման ծրագիրը, և այդպիսի փորձերը որոշակի պարբերականությամբ

[1] Լևոն Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. 2, «Փրինթինֆո», Երևան, 2007, էջ 7–23:
[2] Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկյան հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, Երևան, 1958, էջ 27:
[3] Մ. Հակոբյան, Մանազկերտի 1071 թ.-ի ճակատամարտը, https://www.academia.edu/28420853/ Մանազկերտի_1071_թ_ճակատամարտը:

կրկնվում էին:

Միաժամանակ, հարկ է նշել, որ այդ պահին Բյուզանդական կայսրության ուղղափառ կրոնական վերնախավի վաղեմի երազանքի՝ Հայ առաքելական եկեղեցուն «կուլ տալու» զսպող գործոն էր արտաքին ընդհանուր միջավայրի մյուս «խաղացողը»՝ Եվրոպական կաթոլիկ «միությունը»՝ ի դեմս խաչակիրների[4], որոնց անմիջական մասնակցությամբ տվյալ ժամանակահատվածում ընթանում էին Կիլիկյան Հայաստանին սահմանակից 3 պետական միավորների՝ Իկոնիայի (Ռումիի) սուլթանության[5], Եդեսիայի կոմսության[6], Անտիոքի դքսության (իշխանապետության)[7] «վերբեռնման» գործընթացները: Արձանագրենք, որ վերջին երկուսը, իբրև ոչ մահմեդական միավորներ, ներկայացնում էին խաչակրաց նախագծեր և ստեղծվել էին որպես խաչմերուկ հանդես եկող այդ տարածաշրջանում եվրոպական վերահսկման գործիքակազմը հարստացնելու նպատակով:

Ելնելով վերոնշյալից, ինչպես նաև հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանում խաչակիրների դերակատարման ներազդեցության չափն ու նրանց մտադրությունները՝ կարող ենք եզրակացնել, որ, Կիլիկիայի իշխանապետության կայացման առումով, տարածաշրջանային ներկապնակում արտաքին միջավայրի որոշիչ «խաղացողն» ու շահագրգիռ միավորը խաչակիրների դրոշով առաջնորդվող եվրոպական «զինված ուժերի» միավորումն էր, որն իր բնույթով կարելի է համարել մի քանի պետությունների կամ կառույցների (Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Հռոմ, Վատիկան) կողմից մշակված, նոր աշխարհակարգի ու կառավարման առաջին գլոբալ նախագիծը: Թեև արտաքինից այն շղարշապատված էր կրոնական ուղղվածությամբ, սակայն, ըստ էության, տարածաշրջանում եվրոպական պետությունների շահերն ու ներկայությունն ապահովող ռազմաքաղաքական մեծ ու համապարփակ մի ծրագիր էր, որի կատարողը տարածաշրջան «գործուղված» ռազմական միավորն էր և, որի առաջխաղացմանը զուգահեռ, հայտնվում էր նաև նրա քաղաքական բաղադրիչի կրողը՝ ի դեմս համաշխարհային քաղաքականության տեղական ներկայացուցիչների կամ հրավիրյալ գործիչների:

Խաչակիրների ծրագրային դրույթները, որոնք հիմնականում ռազմավարական բնույթի էին (նոր պետական միավորների ստեղծում, մշտական լոգիստիկ ներկայություն և բեռնափոխադրումների անմիջական վերահսկում), չէին հակասում նրան, որ ռազմական ներուժի ու «գործուղման» մեջ գտնվող մարդկային ռեսուրսների նվազագույն ծախսերով տարածաշրջանում ապահովվի այլոց, այս դեպքում՝ հայերի կողմից նոր պետականության կամ իշխանության ծնունդը՝ քրիստոնյա եկեղեցական վերնախավով: Ավելին, ըստ «կնքահայր» եվրոպական պետությունների ու կրոնական կառույցների, տարածաշրջանում այդպիսի պետական միավորի ծնունդը կարող էր նպաստել քրիստոնեական գործոնի որոշիչ դառնալուն: Ուստի հենց քրիստոնյա վերնախավով պետական միավոր ստեղծելու գաղափարական ու ռազմավարական շահերի համընկնումների համատեքստում Հայկական Կիլիկիայի ծնունդն ու գոյությունը ողջունելի էին:

Ռազմավարական գլոբալ ծրագրում մարտավարական այդ քայլը՝ գործնական

[4] Խաչակրաց արշավանքները, 11-րդ դարից սկսած, Ֆրանսիայի թագավորության և Հռոմեական կայսրության գլխավորությամբ ռազմակրոնական արշավանքների շարք էին Եվրոպայից դեպի Արևելք՝ կաթոլիկ եկեղեցու հովանու ներքո: Հիմնական գաղափարն այլադավաններից Սուրբ երկիրն ազատագրելն էր: Ժամանակագրությամբ արշավանքները համարակալվում են 1-ից 9-ը թվերով (11-13 դարեր), սակայն դրանք տարբեր անվանումներով, շարժառիթներով և ուղղություններով շարունակվել են նաև նշված 9 արշավանքից հետո և ձգվել մինչև 15-րդ դար: Բացի կրոնականից, տվյալ աշխարհաքաղաքական մեծ ծրագրում առկա էին ևս երկու կարևոր բաղադրիչներ. ա) կրոնական՝ վերահսկողություն պապության կողմից արևելյան եկեղեցիների և եվրոպական միապետությունների նկատմամբ, բ) առևտրային՝ Եվրոպային Ասիայի հետ կապող երթուղիների նախանշում և վերահսկում: Արշավանքի հիմնական ռազմական միավորի սուբյեկտները պատմության մեջ հայտնի են խաչակիրներ անվանումով:

[5] Ա. Հովհաննիսյան. Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության միջև 1218 թ. կնքված պայմանագրի շուրջ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, http://www.armin.am/images/menus/2392/ARAM_HOVHANNISYAN_1218.pdf

[6] Гуринов Е. А. К вопросу об основании графства Эдесского // Веснік БДУ. Серыя 3: Гісторыя. Эканоміка. Права. 2014. № 3. С. 45–50.

[7] Վ. Ավետիսյան, Անտիոքը Կիլիկիային միացնելու Լևոն 2-ի փորձի օրինականության խնդիրը, http://publications.ysu.am/wp-content/uploads/2014/02/19-Vahe-Avetisyan.pdf

տեսանկյունից, պարզորոշ ընդգծվեց հատկապես առաջին երկու Խաչակրաց արշավանքների ժամանակահատվածում[8]: Պետականակերտման գործընթացին զուգահեռ, խաչակիրների «կնքահայրերը» խրախուսեցին նաև Ռուբեն իշխանի՝ իր տիրապետության ու վերահսկողության տակ նոր տարածքներ ներառելու նպատակային ծրագիրը, որով, փաստորեն, հնարավորություն ընձեռվեց այլոց մարդկային ու ֆինանսական ռեսուրսներով «կրակից տաք շագանակները» հանելու: Իհարկե, այս գլոբալ նախագծի և՛ ռազմավարության, և՛ մարտավարության մեջ կար շղարշված, բայց նաև հստակորեն ուրվագծված մի հեռահար նպատակ.հետագայում պետական միավորի վերածված հայկական Կիլիկիային, կրոնական բաղադրիչի առումով, ամբողջապես «բերել» կաթոլիկ եկեղեցու վերահսկման տիրույթ: Պատմությունը ցույց տվեց, որ հատկապես Կիլիկիայի թագավորության ժամանակաշրջանում այդ թաքնված նպատակը սկսեց ստանալ միս ու արյուն:

Արտաքին ընդհանուր միջավայրի միավորներից երկուսը՝ Եգիպտական Մամլուքյան սուլթանությունը[9] և Մոնղոլական կայսրությունը[10], տարածաշրջանի քարտեզի վերաձևավորման «մեծ խաղին» միացան այն ժամանակ, երբ Կիլիկյան Հայաստանն արդեն ամրագրվել էր որպես թագավորություն:

Այս միավորների, ինչպես նաև Իրանի Հուլավյան իլ-խանության և Սիրիայի Այուբան սուլթանության ներազդեցության օրինակներն ու դրանցից քաղված դասերը կբացահայտվեն Կիլիկիայի թագավորության ժամանակաշրջանում իրականացված ռազմաքաղաքական և միջազգային տնտեսական համագործակցության մի շարք ծրագրերի, վարվող արտաքին քաղաքականության, տնտեսության բարեփոխումների, առևտրի և այլ ոլորտների զարգացման վերլուծության ժամանակ:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ուսումնասիրվող տարածաշրջանում տվյալ ժամանակաշրջանում այսպիսի արագացված գործընթացների հիմնական «մեղավոր-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Կիլիկիայի թագավորության գործող անձինք և նրանց գործողությունների վերջնարդյունքը[11]

հ/հ	*Թագավոր*	*Ղեկավարման տարիներ*	*Ծագում*	*Գործողությունների ժամանակացույց*
1	Լևոն Բ Մեծագործ (իշխանապետ / թագավոր)	1187–1198 թթ. / 1198-1219 թթ.	Իշխանապետ Ռուբեն Գ-ի եղբայրը	Թագավորության և Ռուբինյան արքայատան հիմնադիրը՝ Լևոն Բ Մեծագործը, որպես հայոց թագավոր օծվեց 1196 թ.-ին, Խաչակրաց նոր արշավանքի ժամանակ՝ Հայնրիխ VI կայսեր հանձնարարությամբ, Գերմանիայի զորքերի առաջնորդ Լյուբեցկի Կոնրադ արքեպիսկոպոս ծիրանավորի կողմից: Լևոն Բ-ի թագադրումը քաղաքական մեծ իրադարձություն էր և դիտարկվում էր որպես հայոց կործանված թագավորության վերականգնում: Նրա օրոք թագավորության սահմանները տարածվեցին Սելևկիայից մինչև Անտիոք, Միջերկրական ծովեզերքից մինչև Տավրոսի ու Անտիտավրոսի լեռներ: Բուն Կիլիկիայից բացի, թագավորության մեջ մտան Պամփիլիան, Իսավրիան, Լիկանիան, Կադառնիան ու Գերմանիկեն:

[8] Լևոն Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. 1, «Փրինթինֆո», Երևան, 2007, էջ 34:

[9] Ա. Հովհաննիսյան, Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտոսի Մամլուքյան սուլթանության առաջին ռազմաքաղաքական բախումը. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, 2003, http://www.historyofarmenia-am.armin.am/images/menus/275/PDF%202.pdf

[10] Դ. Թինոյան, Հեթում Ա-ի «մոնղոլական» քաղաքականությունը Մոնղոլական կայսրության ձևավորման շրջանում, http://publications.ysu.am/wp-content/uploads/2017/09/D.Tinoyan.pdf

[11] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 408-417:

2	Զաբել	1219-1222 (52) թթ.	Լևոն Բ-ի դուստրը	Լևոն Բ-ի մահից հետո Ռուբեն Գ-ի (Լևոն Բ-ի ավագ եղբայրը) թոռը՝ Ռուբեն-Ռայմոնդ Անտիոքացին, իր ձեռքը վերցրեց Կիլիկիայի հայոց գահը, բայց շուտով պարտվեց պատերազմում, ընկավ գերի և սպանվեց: Լևոն Բ-ի կամքով գահաժառանգ նշանակված իր և Սիբիլ Լուսինյանի դուստրը՝ Զաբելը, դարձավ հայոց թագուհի (1219–1222 (52) թթ): Տվյալ ժամանակահատվածում պետության գլուխ անցած անչափահաս թագուհու խնամակալներն էին Կոստանդին սպարապետը, Գաստոնի տեր Ադանը և Հովհաննես Զ Սիսեցի կաթողիկոսը:
3	Ֆիլիպ	1222-1225 թթ.	Անտիոքի դուքս Բոհեմունդի որդին, Զաբելի ամուսինը	Խնամակալները թագավորի աթոռի համար պայքարին վերջ դնելու նպատակով Զաբելին ամուսնացրին Անտիոքի դուքս Բոհեմունդի 16-ամյա որդի Ֆիլիպի հետ (1222 թ.), որին և հանձնվեց թագավորական գահը, պայմանով, որ անվերապահ հարգվեն հայ իշխանների իրավունքները, հայոց հավատն ու սովորույթները: Սակայն, Ֆիլիպը դրժեց խոստումը, որի համար Զաբելի խնամակալ Կոստանդին սպարապետը (Լևոն Բ-ի քեռորդին՝ Հեթումյանների տոհմ) 1225 թ. ձերբակալեց և մահապատժի ենթարկեց նրան:
4	Հեթում Ա	1226-1269 թթ.	Նոր արքայատոհմի հիմնադիրը, Կոստանդինի որդին, Զաբելի երկրորդ ամուսինը	Իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրած Կոստանդինը 1226 թ.-ին ավելի քան 60 իշխանների հետ գումարեց խորհրդակցություն, որի ժամանակ որոշվեց, որ նրա 13-ամյա որդին՝ Հեթումը, պետք է ամուսնանա Զաբելի հետ և հռչակվի հայոց թագավոր: Մինչև որդու չափահաս դառնալը՝ Կոստանդինն ինքը վարեց երկրի գործերը՝ որպես Լևոն Բ Մեծագործի կողմից նշանակված թագավորության խնամակալ: Հեթում Ա-ն (1226–69 թթ.) դարձավ Կիլիկյան թագավորության նոր արքայատոհմի՝ Հեթումյանների հիմնադիրը: Նրա գահակալման ժամանակահատվածում մոնղոլ-թաթարները սկսեցին սպառնալ Կիլիկիայի թագավորությանը: Ցուցաբերելով դիվանագիտական հմտություններ՝ Հեթում Ա-ն 1254 թ.-ին մեկնեց մոնղոլների մայրաքաղաք Կարակորում և արքունիքի հետ կնքեց փոխօգնության պայմանագիր, որով ամրապնդեց Կիլիկիայի միջազգային հեղինակությունը և էականորեն բարձրացրեց թագավորության անվտանգության աստիճանը: 1256–62 թթ.-ին Իկոնիայի սուլթանությունից ազատագրվեցին Հերակլեա և Մանիոն սահմանային բերդերը, Կապադովկիայի հարավային շրջանները, ինչպես նաև Մարաշ, Այնթապ, Բեհեստ քաղաքներն ու դրանց շրջակայքը: Նոր վերելք ապրող Եգիպտոսի սուլթանությունը 1266 թ.-ին մեծ ուժերով ներխուժեց Կիլիկիա. Մառիի ճակատամարտում հայկական զորամասի պարտությունից հետո թշնամին գրավեց ու կողոպտեց Սիսը և այլ քաղաքներ՝ գերեվարելով բազմահազար հայերի: Հեթում Ա-ն, որոշ բերդեր զիջելով Եգիպտոսի սուլթանությանը, 1268 թ. հուլիսին հաշտություն կնքեց վերջինիս հետ և գերությունից ազատեց գահաժառանգ Լևոնին:

5	Լևոն Գ	1269-1289 թթ.	Հեթում Ա-ի և Զաբելի ավագ որդին	Լևոն Գ-ի գահակալման սկզբնական տարիներին հայոց թագավորությանն արևելքից սպառնում էր Եգիպտոսի սուլթանությունը, հյուսիսից՝ Իկոնիայի թյուրքերը, իսկ երկրի ներսում սրվում էին ավատատիրական երկպառակությունները: 1275 թ.-ին Եգիպտոսի սուլթանության զորքերը ներխուժեցին Կիլիկիա, ավերեցին ու կողոպտեցին մի շարք բնակավայրեր: Սակայն, Սիս քաղաքի մոտ հայկական բանակը Սմբատ Սպարապետի գլխավորությամբ ջախջախեց թշնամուն և ազատագրեց երկիրը: Դրանից հետո Լևոն Գ-ն հաղթեց Իկոնիայի սուլթանին և թաթար-մոնղոլական օժանդակ ուժերով արշավեց դեպի Ասորիք: Փոփոխակի հաջողություններով՝ կռիվները շարունակվեցին շուրջ մեկ տասնամյակ: Արդյունքում, 1285 թ.-ին Լևոն Գ-ն և Եգիպտոսի սուլթանը ստորագրեցին տասնամյա հաշտության պայմանագիր: Լևոն Գ-ի թագավորության ժամանակահատվածում աշխուժացավ արտաքին առևտուրը: Նախ՝ 1271 թ.-ին վերակնքվեցին վենետիկցիների, իսկ 1288 թ.-ին՝ ջենովացիների հետ նախկինում կնքված առևտրական պայմանագրերը: Հատվեցին ոսկե, արծաթե և պղնձե դրամներ: Լևոն Գ-ի հովանավորության ներքո արարում էին հայ մշակույթի նշանավոր գործիչներ Վարդան Մեծը, Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես Երզնկացին, Վահրամ Ռաբունին և ուրիշներ:
6	Հեթում Բ	1289-1296 թթ., 1299-1301 թթ.	Լևոն Գ-ի ավագ որդին	Լևոն Գ-ին հաջորդած Հեթում Բ թագավորը (1289–1303 թթ.), հիասթափվելով թուլացած և արդեն իսկ մահմեդականացած մոնղոլների հետ կնքված դաշինքից, դիմեց Հռոմի պապի և Արևմուտքի պետությունների օգնությանը՝ այդ քայլով էլ ավելի սրելով մահմեդական հարևանների թշնամանքը: 1292 թ.-ին եգիպտական զորքերը գրավեցին Հռոմկլան և գերեցին Ստեփանոս Դ Հռոմկլայեցի կաթողիկոսին: Նոր կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցին (1293–1307 թթ.) հարկադրված Կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Սիս:
7	Սմբատ	1296-1298 թթ.	Հեթում Բ-ի եղբայրը	Դժգոհելով Հեթում Բ-ի ապաշնորհ կառավարումից՝ նրա եղբայրը՝ Սմբատը, իրականացրեց պալատական հեղաշրջում, գրավեց գահը և բանտարկեց Հեթում Բ-ին:
8	Կոստանդին Բ (1298–99 թթ.)	1298-1299 թթ.	Հեթում Բ-ի եղբայրը	Շարունակական խարդավանքներից հետո՝ 1298 թ.-ին, Սմբատից գահը խլեց Հեթում Ա-ի մյուս եղբայրը՝ Կոստանդինը: Օգտվելով երկրի ներքին միջավայրում ծավալվող գահակալական խարդավանքներից՝ նույն թվականի գարնանը Եգիպտոսի սուլթանության և հարևան ամիրությունների զորքերը ներխուժեցին թագավորության արևելյան շրջաններ և նվաճեցին Ջահան գետից հարավ ընկած հողերը, ներառյալ՝ Հումուս, Թիլ, Համդուն, Կվայրան, Նողայր, Մարաշ և այլ բերդաքաղաքները:

9	Լևոն Դ (1301–08 թթ.)	1301-1308 թթ.	Հեթում Բ-ի եղբորորդին	1301 թ.-ին արքունիք վերադարձած Հեթում Բ-ն Կիլիկիայի թագավոր օծեց մանկահասակ եղբորորդուն՝ Լևոն Դ-ին (1301–08 թթ.), և «թագավորահայրը», որպես վերջինիս խնամակալ, շարունակեց իր արևմտամետ քաղաքականությունը: Արևմուտքի պետությունները բազմակողմ օգնության դիմաց պահանջեցին, որ Հայ առաքելական եկեղեցին ընդունի կաթոլիկություն և ենթարկվի Հռոմի պապին: 1307 թ.-ին մայրաքաղաք Սիսի Սրբ. Սոֆիա մայր տաճարում կայացած համաժողովում Լևոն Դ-ն քննարկեց կաթոլիկ եկեղեցուն միանալու առաջարկը: Թեև արքունիքի ճնշմամբ ժողովն ընդունեց եկեղեցիների միավորման պահանջը, սակայն ժողովուրդը մերժեց դա և պայքարեց արևմտամետ հոսանքի՝ ունիթորների դեմ, որի հետևանքով խախտվեց պետության հասարակական-քաղաքական միասնությունը: Լևոն Դ-ի քայլը դիտելով որպես խաչակիրներին Արևելք հրավիրելու նոր փորձ՝ մոնղոլ զորավար Փիլարդուն Անարզաբան քաղաքում դավադրաբար սպանեց հայոց թագավորին և նրան ուղեկցող 40 հայ իշխաններին: Հայկական զորքերը՝ Հեթում Բ-ի եղբայրներ Օշինի և Ալինախի գլխավորությամբ, սպանեցին Փիլարդուին ու ոչնչացրին նրա ջոկատը, որով, փաստորեն, վերջ դրվեց հայ-մոնղոլական փոխշահավետ զինակցությանը:
10	Օշին Ա	1308-1320 թթ.	Հեթում Բ-ի եղբայրը	Լևոն Դ-ին հաջորդած Օշին Ա-ն (1308–20 թթ.) Հռոմի պապի պահանջով 1309 թ.-ին հրավիրեց նոր ժողով՝ Սիսի ժողովի որոշումները վերաքննելու և կենսագործելու համար: Հանդիպելով ազգային ուժերի համառ դիմադրությանը՝ Օշին Ա-ն առժամանակ դադարեցրեց կրոնական վեճերը: 1316 թ.-ին Ադանայում գումարված նոր ժողովում կաթոլիկ եկեղեցուն միանալու որոշումը կրկին ձախողվեց՝ ժողովրդի դիմակայության շնորհիվ: 1318 թ.-ին Եգիպտոսի մամլուքներն ու Իկոնիայի թուրքմեն կարամանները ներխուժեցին Կիլիկիա և ասպատակեցին Տարսոնի շրջակայքը: Հայկական զորքերը զգալի կորուստների գնով հետ մղեցին թշնամուն:
11	Լևոն Ե	1320-1342 թթ.	Կիլիկիայի Հայոց թագավոր Օշին Ա-ի և Իզաբելլա Գ թագուհու որդին	Օշին Ա-ին հաջորդեց նրա 10-ամյա որդին՝ Լևոն Ե-ն (1320–42 թթ.): Խաչակրաց նոր արշավանքի հորդորով նա կրկին դիմեց եվրոպացիներին: Եգիպտոսի սուլթանության և Հալեպի ամիրի զորքերը 1335 և 1336 թթ.-ին վերստին ասպատակեցին Կիլիկիան: 1337 թ.-ին Լևոն Ե-ն ծանր պայմաններով հաշտություն կնքեց վերջիններիս հետ, որի հետևանքով երկրի հարավարևելյան շրջաններն (Սև լեռներից մինչև Ջահան գետը) ու Այաս նավահանգստային քաղաքն անցան Եգիպտոսի սուլթանությանը, իսկ հայոց թագավորը պարտավորություն ստանձնեց չդաշնակցելու Արևմուտքի պետությունների հետ: Լևոն Ե-ի մահով (1342 թ.) ընդհատվեց Ռուբինյան-Հեթումյան տոհմի արական ճյուղը:

12	Գվիդոն կամ Կոստանդին Գ	1343-1344 թթ.	Լևոն Գ Հեթումյանի դուստր Զաբելի որդին՝ Խաչակիր ասպետ, Լուսինյանների արքայատուն (կաթոլիկ)	Լևոն Ե-ի մահից հետո արևմտամետ ունիթորները հայոց գահը հանձնեցին Կիպրոսի Լուսինյանների արքայատան ներկայացուցիչ Գվիդոնին, որը 1310 թ.-ին հոր՝ Ամորի Բ-ի դավադիր սպանությունից հետո 4 եղբոր և մոր՝ Զաբելի (Լևոն Գ Հեթումյանի դուստրը) հետ փախել էր Կիլիկիա և ապրում էր Լևոն Ե-ի արքունիքում: 1343 թ.-ին Գվիդոնը հայկական ծեսով օծվեց հայոց թագավոր՝ ստանալով Կոստանդին Գ անունը: Կոստանդին Գ-ն շարունակեց իր նախորդի արևմտամետ քաղաքականությունը՝ դրանով առաջացնելով ոչ միայն արտաքին արևելյան «խաղացողների», այլև սեփական ժողովրդի դժգոհությունը:
13	Կոստանդին Դ	1345-1363 թթ.	Նոր արքայատոհմի (Նղրյանների իշխանատոհմ) հիմնադիրը, Կոստանդինի որդին, Զաբելի երկրորդ ամուսինը	1344 թ.-ին հայրենասեր ուժերը՝ իշխան Օշին Բակուրանի գլխավորությամբ, ապստամբեցին և Ադանայում սրատեցին Կոստանդին Գ-ին ու նրա ֆրանկ պալատականներին: Իշխանների խորհուրդը թագավոր ընտրեց Հեթումյանների ազգական, Նղրի տեր մեծ մարաջախտ Բաղդինի որդի Կոստանդին Դ-ին (1345–63 թթ.): Մահմեդական ամիրությունների հարձակումները պարբերաբար կրկնվեցին 1340–50-ական թթ.: 1360 թ.-ին Եգիպտոսի մամլուքները նվաճեցին Դաշտային Կիլիկիան՝ Տարսոնն ու Ադանան:
14	Կոստանդին Ե	1365-1373 թթ.	Կոստանդին Դ-ի հորեղբորորդին	Կոստանդին Ե-ն Կիլիկիայի հայոց Նղրյանների իշխանական տոհմի ներկայացուցիչ մեծ մարաջախտ Բաղդինի եղբայր Հեթում իշխանի որդին է: Կոստանդին Ե-ի օրոք երկրի զգալի մասը զավթեցին մամլուքներն ու թուրքմենները: Արևմտամետ հայ իշխանները՝ Կոստանդին Դ–ի այրի Մարիունի գլխավորությամբ, ձգտում էին տապալել Կոստանդին Ե-ին և գահը հանձնել Կիպրոսի Պետրոս I թագավորին: Այդ դավադիր մտադրությունը նրանց չհաջողվեց իրագործել: 1369 թ.-ին Եգիպտոսի 60 հազարանոց բանակը պաշարեց Սիսը, սակայն, չկարողանալով գրավել միջնաբերդը, նահանջեց:
15	Լևոն Զ	1374-1375 թթ.	Լուսինյանների արքայատան ներկայացուցիչ Ամորի Լուսինյանի և Լևոն Գ-ի դուստր Զաբելի որդի Ջիվանի ու վրաց արքայադուստր Սոլդանանի որդին (կաթոլիկ)	1373 թ.-ին ունիթորները դավադրաբար սպանեցին Կոստանդին Ե թագավորին և գահը հանձնեցին Ջիվան Լուսինյանի որդուն՝ Լևոն Զ Լուսինյանին: Վերջինս իր արևմտամետ քաղաքականությամբ շարունակեց հարուցել շրջակա մահմեդական պետությունների դժգոհությունը: Եգիպտոսի սուլթանության զորքերը ներխուժեցին Կիլիկիա և 1375 թ.-ի հունվարի 5-ին պաշարեցին Սիսը: Փետրվարին նրանց միացան Հալեպի ամիրության զորքերը: Ապրիլի 22-ին Լևոն Զ-ն հաշտություն խնդրեց և, իր անձի համար ապահովության երաշխիք ստանալով, բերդը հանձնեց հակառակորդին: Ներքին երկպառակությունները և արտաքին հարձակումները, ի վերջո, հանգեցրին հայկական վերջին թագավորության անկմանը, իսկ Լևոն Զ-ն իր ընտանիքի և կաթողիկոսի հետ գերեվարվեց: 1382 թ-ի սեպտեմբերին Լևոնի խոստովանահայր Հովհաննես Դարդելի ջանքերով,

				Կաստիլիայի Հովհան I և Արագոնի Պեդրո IV թագավորների միջնորդությամբ Լևոնը գերությունից ազատվում է և մեկնում Եվրոպա: Կաստիլիայի թագավորը Լևոնին է պարգևում է Մադրիդ, Վիլյարեալ, Անդուխար քաղաքները և խոստումներ տալիս օգնելու նրան Կիլիկիայի գահը վերստանալու համար: Սակայն նրան, ըստ էության, զուտ օգտագործում են Մերձավոր Արևելքում իրենց ազդեցությունն ընդարձակելու համար և ոչ ավելին: Կյանքի վերջին տարիները հայոց վերջին միապետն անցկացնում է Փարիզի Սենտ–Օուեն պալատում, որը նրան 1384 թվականին հատկացրել էր Ֆրանսիայի Շառլ VI թագավորը: Հայոց վերջին թագավորի աճյունը գտնվում է Փարիզի Սեն Դենի վանական համալիրի թագավորական դամբարանում:

ները», ըստ էության, խաչակիրներն էին, ավելի ստույգ՝ Խաչակրաց արշավանքները, որոնց կրոնական շղարշի ներքո պարզորոշ երևում էր աշխարհակարգի փոփոխմանը միտված գործընթացը: Հետևաբար՝ պատահական չէ, որ հատկապես սկզբնական մի քանի արշավանքների ժամանակ և՛ խաչակիրները, և՛ մնացյալ խոշոր «խաղացողները» փորձում էին հստակեցնել և, ինչ-որ առումով, «վերախմբագրել» տարածաշրջանի ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ տնտեսական հարաբերությունների սկզբունքները:

Այդ դիտանկյունից, տվյալ ժամանակահատվածը, թերևս, ամենահարմարն էր Կիլիկիայի այլընտրանքային պետության ստեղծման համար, և հայոց իշխան Ռուբենն օգտագործեց դա լիարժեքորեն՝ տարածաշրջանում էականորեն ամրապնդելով իր դիրքը, ներքին միջավայրում համակիր դարձնելով հայ եկեղեցուն, արտաքին միջավայրում ձեռք բերելով ուժեղ գործընկերներ: Այս ամենի արդյունքում էլ իրական նախադրյալներ ձևավորվեցին պետական միավորի՝ որպես հավասար «խաղացողի»՝ առավել բարձր կարգավիճակով մեծ «խաղասեղանի» մոտ հանդես գալու համար:

Արտաքին քաղաքականության և ռազմաքաղաքական հայեցակարգերը

Թագավորությունները հենց այնպես չեն ստեղծվում: Հայկական Կիլիկիայի պարագայում իշխանապետությունն ամուր հիմք դարձավ թագավորություն վերակերտելու գործում: Հիմնական ներազդող գործոնն այս գործընթացում արտաքին քաղաքականության և ռազմաքաղաքական հայեցակարգերի միահյուսված բաղադրիչն էր, որի կշռի բարձրացումն ու ազդեցության չափի ճշգրիտ հաշվարկը հնարավորություն տվեցին Կիլիկիայի թագավորությանը կայանալու և պատշաճ կերպով ներկայանալու Մերձավորարևելյան ոչ այնքան հանդարտ տարածաշրջանում՝ որպես կարևոր դերակատարում ունեցող «խաղացող»:

Շարունակելի...

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, 719 էջ:
2. Լևոն Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. 1, «Փրինթինֆո», Երևան, 2007, 552 էջ:
3. Լևոն Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. 2, «Փրինթինֆո», Երևան, 2007, 672 էջ:
4. Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկյան հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, Երևան, 1958, 94 էջ:
5. Ա. Հովհաննիսյան, Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտոսի Մամլուքյան սուլթանության առաջին ռազմաքաղաքական բախումը, ԵՊՀ հայագիտական հետազոտություն-

ների ինստիտուտ, 2003, 7 էջ, http://www.historyofarmenia-am.armin.am/images/menus/275/PDF%202.pdf
6. Թինոյան Դ., Հեթում Ա-ի «մոնղոլական» քաղաքականությունը Մոնղոլական կայսրության ձևավորման շրջանում, 12 էջ, http://publications.ysu.am/wp-content/uploads/2017/09/D.Tinoyan.pdf
7. Հովհաննիսյան Ա. , Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության միջև 1218 թ. կնքված պայմանագրի շուրջ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, 8 էջ, http://www.armin.am/images/menus/2392/ ARAM_HOVHANNISYAN_1218.pdf
8. Ավետիսյան Վ., Անտիոքը Կիլիկիային միացնելու Լևոն 2-ի փորձի օրինականության խնդիրը, 14 էջ, http://publications.ysu.am/wp-ontent/uploads/2014/02/19-Vahe-Avetisyan.pdf
9. Гуринов Е. А., К вопросу об основании графства Эдесского // Веснік БДУ. Серыя 3: Гісторыя. Эканоміка. Права. 2014. № 3, 6 с.
10. Մ. Հակոբյան, Մանազկերտի 1071 թ.-ի ճակատամարտը, 43 էջ, https://www.academia.edu/28420853/Մանազկերտի_1071_թ._ճակատամարտը:

Амазасп ГАЛСТЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

УРОКИ КИЛИКИ: ЧАСТЬ ТРЕТЬЯ

В Киликии переход от Княжества к Королевству не мог произойти только в результате эффективной деятельности и взаимного сотрудничества влияющих факторов и субъектов внутренней среды. Следовательно, это было необходимым, но еще не достаточным условием. Главной формулой успешности процесса стало своевременное и эффективное использование совокупности возможных сочетаний интересов внутренних и внешних субъектов и их пересечений - как инструмента достижения цели. В этом смысле в этой части цикла статей «Уроки Киликии» в контексте влияния факторов хронологии произведена классификация влиятельных единиц внешней среды по группам и приоритетам их интересов. Изучена степень возможного влияния основных внешних «игроков» в регионе в указанный период и проанализирован сложный узел противостояния и пересечения их доминирующих интересов в процессе перехода от Киликийского княжества к Королевству.

Ключевые слова: *Киликийское царство, крестоносцы, крестовые походы, группы влияния, внешняя среда*

Hamazasp GALSTYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics

THE VISION OF THE ARMENIAN SOCIETY

CILICIA LESSONS: PART THREE

In Cilicia, the transition from the Principality to the Kingdom did not solely occur as a result of effective efforts and cooperation of influencing factors and subjects of the internal environment. While these were necessary conditions, they were not sufficient on their own. The key to success in this process was the timely and effective use of a myriad of intersecting interests of internal and external entities as a means to achieve a common goal. In this sense, in this part of the “Lessons of Cilicia” article series in the context of the influence of chronological factors, the classification of influential units of the external environment was made based on groups and priorities of their interests. We analyze the degree of possible influence of the main external "players" in the region during this period. Furthermore, we explore the complex web of confrontation and intersection of their dominant interests in the process of transition from the Cilician Principality to the Kingdom.

Keywords: *Principality of Cilicia, Crusades, Crusaders, influencing groups, internal environment*